ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
20 հունիս 2025 թվական ք. Արթիկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ջունա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Ջունա տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջանակներում անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ հանրային առաջին քննարկումների մասնակիցների

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 14:00-ին:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի ղեկավարի օգնական Տ. Չարչյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և ՏՏ բաժնի պետ Ա. Թադևոսյանը, <<ՋՈՒՆԱ>> ՍՊԸ-ի տնօրեն Հ. Կարապետյանը, ընկերության փորձագետ Գ. Մուրադյանը, Գ. Հակոբյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և ՏՏ բաժնի պետ Ա. Թադևոսյանը:

Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> որոշման (որոշումը խմբ. 28.12.23թ N 2343Ն) սահմանված կարգի համաձայն՝ հունիսի 20-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համանքապետարանում տեղի են ունենում հանրային լսումներ:

Օրակարգում՝ «Ջունա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Ջունա տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջանակներում անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ հանրային առաջին քննարկումն է:

Հանրային իրազեկումներն օրենքով սահմանված կարգով հրապարակվել են Արթիկի համայնքապետարանի պաշտոնական կայքում, <<Առավոտ>> օրաթերթի համարում, հրապարակումը փակցված է եղել Արթիկի համայնքապետարանում տեղադրված հայտարարությունների վահանակի վրա:

«Ջունա» ընկերությունը դիմել է Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանին 03/06/2025 թվականին թիվ

3025 ներկայացված գրությամբ, համաձայն որի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի վարչական տարածքում, Տուֆաշեն գյուղից 1.8կմ, Արթիկից 3.1կմ, Պեմզաշենից 2.8կմ հեռավորության վրա գտնվող, 3.92 հա մակերեսով ընդերքի տեղեմասը շահագործելու նպատակ ունի:

Նա խոսքը փոխանցոց ընկերության ներկայացուցչին՝ նախատեսվող գործունեության վերաբերյալ ներկա հանրությանն ավելի հանգամանալից տեղեկատվություն տրամադրելու նպատակով

Բոլոր հուզող հարցերն, առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող եք հնչեցնել հենց հիմա և ստանալ դրանց պատասխանները:

Ելույթ ունեցան

<<ՋՈՒՆԱ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Մուրադյանը, ով ողջունելով ներկաներին, ներկայացրեց, որ ընկերությունը 2022 թվականին ընկերությունը երկրաբանահետախուզական աշխատանքների համար հանրային քննարկումներ է ունեցել համայնքում, ինչի արդյունքում ընկերությանը տրամադրվել է երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու համար օրենքով սահմանված թույլտվություն: Այդ թույլտվության շրջանակներում տարածքում իրականացվել են հորատումներ, լաբորատոր աշխատանքներ, նմուշառում: Այս բոլոր գործողությունների արդյունքում կազմվել է հաշվետվություն, որը ներկայացվել է ՏԿԵ նախարարություն: Համապատասխան փորձաքննության և ստուգումներից հետո ՏԿԵ նախարարի կողմից 19.05.2025 թվականի 936 Ա հրամանով հաստատվել է ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Ջունա տեղամասի պաշարների հաստատումը: Այս հանրային քննարկումները միտված են շահագործման թույլտվություն ստանալուն: Նա կարևորեց համայնքի դրական դիրքորոշումը ներդրումային ծրագրերին օժանդակելու քաղաքականությունը, որը դրական արդյունքներ է բերելու համայնքին աշխատատեղեր ստեղծելու, հարկերի ավելացման, սոցիալական ծրագրերին մասնակցության տեսքով: Նա նաև նշեց ընկերության տնօրենի պատրաստակամությունը՝ մասնակցելու համայնքի սոցիալական ծրագրերին Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը խնդրեց հանրային քննարկման մասնակիցներին բարձրացնել իրենց հուզող բոլոր հարցերը:

Քանի որ հարցեր չհնչեցին, հանրային քննարկման ներկայացուցիչները դրական դիրքորոշում տվեցին ընկերության նախաձեռնությանը, նիստը վարող Ա. Թադևոսյանն ամփոփեց հանրային քննարկումը՝ դրական մեկնաբանելով աշխատատեղերի ստեղծումը, սեփական եկամուտների ավելացումը, միայն պայմանով, որ գործունեությունը չպիտի վնասի շրջակա միջավայրին, գյուղատնտեսությանը:

Նիստը վարող Ա. Հարությունյանը և ներկաները տվեցին իրենց դրական դիրքորոշումը օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով <<ՋՈՒՆԱ>> ՍՊԸ-ի

կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով ներկայացված աշխատանքային ծրագրի վերաբերյալ:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, նիստը վարող Ա. Թադևոսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումն ավարտվեց 14:10-ին:

Հանրային քննարկումը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝ _____ Ա. Թադևոսյան

Արձանագրեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի օգնական _____ Տ. Չարչյան

<<ՋՈՒՆԱ>> ՍՊԸ-ի տնօրեն _____ Հ. Կարապետյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

«Ջունա» ՍՊԸ-ի կողմից << Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Ջունա տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման քնդերքօգտագործման իրավունք ստանալու շրջանակներում անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ հանրային առաջին քննարկման մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

20.06.2025 թ. ժամը 15:00-ին

Արթիկի համայնքապետարան

<</<	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Բնակության վայրը	Ստորագրությունը
1	[illegible]	093014046	[illegible]	[illegible]
2	[illegible]	094378090	[illegible]	[illegible]
3	[illegible]	094010666	[illegible]	[illegible]
4	[illegible]	098830555	[illegible]	[illegible]
5	[illegible]	077771175	[illegible]	[illegible]
6	[illegible]	077001913	[illegible]	[illegible]
7	[illegible]	093238826	[illegible]	[illegible]
8	[illegible]	094942255	[illegible]	[illegible]
9	[illegible]	098334255	[illegible]	[illegible]
10	[illegible]	093269290	[illegible]	[illegible]
11	[illegible]	077050743	[illegible]	[illegible]
12	[illegible]	077852024	[illegible]	[illegible]
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

07.07.2025 թվական Արթիկ համայնք

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում հանքարդյունահանության զարգացման պարագայում կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր, համայնքում կիրականացվեն սոցիալական ծրագրեր, տարածաշրջանում կարձանագրվի տնտեսական ակտիվացում, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանում 20/06/2025 թվականին կայացած հանրային լսումների դրական արդյունքները՝ Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին նպատակահարմար է գտնում ՀՀ <<ՋՈՒՆԱ>> ՍՊ ընկերությանն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Ջունա տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության շրջանակներում տրամադրել նախնական համաձայնություն:

Հայաստանի Հանարպետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ղեկավար՝ Ա. Ոսկանյան

ՔԱՂՎԱԾՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 124-Ա

Արթիկ համայնք 24 հունիսի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 16-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման (որոշումը խմբ. 28.12.2023 N 2343Ն) հավելվածի 28-րդ կետը և 20 հունիսի 2025 թվականին կայացած հանրային լսումների արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության «ՋՈՒՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկքաղաքի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման (տուֆքարի արդյունահանման) աշխատանքներին տրամադրել նախնական համաձայնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Իսկականի հետ ճիշտ է՝

Կ. Տ.

Արթիկ համայնք
2025թվականի հունիսի 24

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

ՔԱՂԱՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԱՆՇԱՐԺԱՎԱՃԱՌՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՏԳԼԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ